ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերում փոփոխություններ կատարելու մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2026 թվականի նոյեմբերի 20-ի թիվ 1.1 արձանագրությամբ և հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը՝ **ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-26/142**

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կարիքների համար պահեստամասերի ձեռքբերման նպատակով կազմակերպված ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-26/142 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերում կատարված փոփոխության պատճառները և կատարված փոփոխությունների համառոտ նկարագրությունը՝

Փոփոխության առաջացման պատճառ N 1: Էլեկտրոնային աճուրդի համակարգի միջոցով գեներացված հրավերի տեքստով ներկայացված 17-18-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրում անհրաժեշտություն է առաջացել կատարել փոփոխություն:

Փոփոխության նկարագրություն: 17 և 18-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերը շարադրվել են նոր խմբագրությամբ՝ հետևյալ կերպ.

«Ռելեի երկփաթույթ կոճ 5ТД-520-365, առաջին փաթույթի դիմադրությունը 28 Ом, երկրորդ փաթույթի դիմադրությունը 2,4 Ом՝ նախատեսված 81-717 սերիայի մետրոպոլիտենի վագոնների համար: Ապրանքը պետք է լինի նոր և չօգտագործված: Տեղափոխումը և բեռնաթափումն իրականացնում է մատակարարը»:

Փոփոխության հիմնավորում: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Ս. Մելքոնյանին:

Հեռախոս՝ +37498389689 (ներքին հեռախոսահամար՝ 06)
Էլ. Փոստ՝ s.melkonyan@promotion.am
Պատվիրատու՝ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ